

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1955 ՆՈՅԵՄԲԵՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ Թ. 11 - 12

ՊԱՏՄԱԿԱՆ

- ՅՈՎՈՒՆԵԱՆ Հ. ԱՆԴՐԵԱՍ. - Ապետիկ Կոմ-
սի դարձանալի կեանքը (շար.) . . . 225
ՀԱՅՈՒՆԻ Հ. ՎԱՐԴԱՆ. - Նորակերտ Հայ
Լուսինեաններ (շար. եւ վերջ) . . . 229

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ

- ՅՈՎՈՒՆԵԱՆ Հ. ԱԼԵԿՍԱՆԴՐ. - Համառոտ տե-
ղագրութիւն Արարիկի եւ տեսութիւն
անոր բարբերուն, բարբախն ու առած-
ներուն (շար.) . . . 233

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

- ԱՆԱՆԵԱՆ Հ. ՊՈՂՈՍ. - Ճշգրտւած մը Կորիւնի
«Վարդ Մաշխոյի» հրատարակութիւննե-
րուն մէջ . . . 238

ԼԵԶՈՒԱԿԱՆ

- ՏԷՐ ՆԵՐՍԵՍԻԱՆ Հ. Ն. - Լեզուական դիտո-
ղութիւններ Հայոց լեզուի պատմութենէն 244
ՃԱՆԱՇԵԱՆ Հ. ՄԵՍՐՈՊ. - Ստեփանոս Ռո-
քանի Բառարանը (Քննական տեսութիւն
մը: Շար. եւ վերջ) . . . 249
ՏԷՐ ՆԵՐՍԵՍԻԱՆ Հ. ՆԵՐՍԵՍ. - Ի սէր «Մե-
ծաբան»-ին . . . 268

ԳՐԱԿԱՆ

- ՅՈՎՀԱՆՆԵՍԻԱՆ Հ. ՎԱՀԱՆ. - Ժամն է հիմա 256
— Խնդրանք . . . 256
— Չեմ փափաքիր . . . 257
— Ափրիկեան պատկեր . . . 257
ՃԱՆԱՇԵԱՆ Հ. ՄԵՍՐՈՊ. - Ֆէնէր Բադճէ 258
— Գիւղեր Վառդգիւրի վրայ . . . 259

ԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳ

- ՍՐԱՊԵԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ. - Նկարահանող է Լե-
ւոն Ազնաւուրեանի . . . 260
*** - Տարբ. Շահէն Թիւրապեան՝ Հանրային
Կարծիքի Միջազգային Համաժողովին 260
*** - Խաչատուր Աբովեանի ծննդ. 150ամ-
եակը . . . 261
*** - Ապետիկ Իսահակեանի ծննդ. 80ամեակը 261
*** - Ողբ. Գալուստ Ս. Կիւրյակեան . . . 232

(Շար.)

SOMMAIRE

1955 Novembre - Décembre N. 11-12

PAGE

HISTOIRE

- Fogolyan P. André. - La vie étonnante du
Conte Abédik (trad. de l'hongrois) (Suite) 225
Hatsouni P. Vardan. - Histoire des nouveaux
Lusignans (Suite) . . . 229

ETHNOLOGIE

- Hovsepian P. Alexis. - Brève topographie
d'Arabker et description de ses mœurs,
de son dialecte et de ses dictionnaires (Suite) 233

PHILOLOGIE

- Ananian P. Paul. - Une correction dans
les éditions de «La vie de Mash'hotz»
de Korioun . . . 238

LINGUISTIQUE

- Der Nersessian P. N. - Observations lin-
guistiques autour de l'histoire de la lan-
gue arménienne . . . 244
Djanachian P. Mesrob. - Le dictionnaire de
Stéphanos Ro-hka . . . 249
Der Nersessian P. N. - Pour l'amour du
«Mezaskanstch» . . . 268

LITTERATURE

- Hovhannessian P. Vahan. - C'est l'heure . 256
— Demande . . . 256
— Je ne désire pas . . . 257
— Image d'Afrique . . . 257
Djanachian P. Mesrob. - Fénéral Bahdjé . 258
— Nuit sur Bosphor . . . 259

ECHO ARMENIEN

- Serabian Aramais. - L'Exposition du M.
Léon Aznavourian . . . 263
*** - Doct. Chahin Turabian au Congrès
International de l'Opinion Publique 260
*** - Le 150e anniversaire de la naissan-
ce de Khatchatour Abovian . . . 261
*** - Le 80e anniversaire de la naissance
d'Avetik Isahakian . . . 261
*** - Mr. Kaloust S. Gulbenkian . . . 262

(Suite)

ԲԱՋՄԱՎԵՊ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԲԱՐՈՅԱԿԱՆ

1843 - 1955

ՃԺԳ. ՏԱՐԻ



ՆՈՅԵՄԲԵՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ

ԹԻՒ 11 - 12

ԱՄԵՏԻՔ ԿՈՄՄԻ

ԶԱՐՄԱՆԱԼԻ ԿԵԱՆՔԸ

(Շար. տե՛ս Բազմ. 1955. թ. 6-7, էջ 138)

ԳԼՈՒՆ Թ.

ՎԵՐՋԻՆ ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆԸ

Ճիշտ ինչպէս յանկարծ երեւան եկաւ
Պետրոս Ապետիկի վիպական դէմքը պատ-
մութեան մթնշաղէն՝ այնպէս ալ կը նսե-
մանայ ան Պուտայի վերագրումով տա-
րիններուն: Յանկարծական, առանց անց-
քերու, օտարութենէ եկած անոր դէմքը՝
դարեւու մոռացութեան մէջ կ'ընկղմի,
այնքան՝ որ իր մահուան պարագաներէն
ալ բան մը չենք գիտեր:

Այն տարին, երբ Վիեննայի պատա-
դրութենէն վերջ, 1633-ի վերջերը, Պե-
տրոս Ապետիկ իր քայլերը կ'առնէր Հուն-
դարացի ազնուականի տիտղոս կրեյու եւ
Հունգարիա հաստատութիւն արտօնութիւն
ստանալու՝ անոր զուգընթաց կը պատ-
րաստուի նաեւ Եւրոպայի կեանքին իր

վերջին դէպքն ալ. վտանգաւոր տարաշ-
խարհիկ դեպքանութիւնը:

Իր ճամբան դարձեալ դէպի Պարսկաս-
տան կը տանի: Սեպտեմբերեան ամսուոյ օր
մըն էր՝ երբ Յովհաննէս Սոպիէսքի, վեր-
ջին լեհ մեծ թագաւորը կը գրէր Կայսե-
րական քաղաքի ազատագրութեան մասին՝
Փրանսացի ծաղում ունեցող փառասէր իր
կնոջ, Մարիամ Բագմիրա թագուհիին:
Այս վիեննական ընդհանուր լաւատես
մթնոլորտին մէջ Պետրոս Ապետիկի ծը-
րադիրներն ալ աւելի դիւրաւ կը յառա-
ջանային: Ու մինչ արքունի եւ հունգա-
րացի մեծամեծներու չըջանալին մէջ կը
խօսուի իր աստիճանի բարձրացումի մա-
սին՝ միեւնոյն ժամանակ Հայաստանին
ընդհանրական նոր խնդիրներուն մէջ կը
մտնէ ինքն ալ: Դրական տուեալներ ու-
նինք թէ արդէն Հոկտեմբեր ամսոյն Ապե-
տիկ՝ լեհացի իր ծանօթներու եւ աղղեցիկ

ԲԱՋՄԱՎԵՊ

15

մարդոց միջոցաւ կը հետապնդէր իր նոր առաքելութիւնը դէպի Պարսկաստան: Քրիստոնեայ Միացեալ Պետերը, այսինքն՝ Կարոլոս Լոթարինկիացի, Յովհաննէս Թադաւոր, Իննովկենտիոս Քահանայապետ, Պոլոնովիզի, Աւստրիացի Մարկոս կրօնաւոր, Վենետիկեան Գերագոյն խորհուրդը, յետոյ Կարոլոս ԺԱ. Շուէտի նոր թագաւորը, Սպանիոյ թագաւորը, եւ Գուլիելմոս Կոման, ու թուրքերը վտարող բոլոր եռանդուն զործիչները, միշտ աւելի սերտօրէն կը միանան՝ որպէսզի վերջնականապէս իրազործեն իրենց ծրագիրը: Կը ծնանի Սուրբ Դաշինքը (Liga Santa):

1683-ի Հոկտեմբերին, Լեհաստանի Միւշիթից քաղաքէն նամակ մը կը հասնի Վիեննայի Զինուորական Գերագոյն խորհուրդին, որով տեղւոյն բերդակալը՝ Յովհաննէս Փրանկիսկիոս Ռոզտրադեւսի պաշտօնական գրութիւն կ'ուղարկէ Ապետիքի խնդրին համար: Կը ծանուցանէ Կայսերական եւ Արքայական Նորին Վեհափառութեան՝ թէ իր թագաւորը Յովհաննէս Սոպիէսքի հրահանգ տուած է իրեն, որ տեղեկանայ եւ փութացնէ Պետրոս Ապետիքի մեկնումը Վիեննայէն՝ իրազործելու համար «Պարսկական դաշնակցութիւնը»: Կայսերական ուշադրութեան կը յանձնէ՝ թէ արդէն ինք իսկ նըպատակ ունէր այս դեսպանութիւնը Ապետիքին յանձնելու, նկատած թէ սա քաջ տեղեկ էր պարսիկ լեզուին եւ Շահի արքունիքի բարձրուն:

Քանի մը օր վերջ, Հոկտ. 18ին, արդէն պատերազմական դիւանին մէջ կը գտնենք բարձր շրջանակներու կարգադրութիւնները: Արքունիքը հասկցած էր՝ թէ խելացի գործ մը չէր դիւրադրած Սոպիէսքիին հետ բախումներ ստեղծել. արդէն անոր դիւրադրած բնաւորութիւնը քանի մը անգամ վտանգած էր համագործակցութիւնը:

Պարսկաստան մեկնող դեսպանին պարտ-

քը դարձեալ նոյն է. այսինքն համաձայնիլ Շահին հետ՝ թէ մինչ Եւրոպայի մէջ խաչակրութիւնները յիշեցնող քրիստոնեայ մեծ բանակներ պիտի դարձնուին թուրքերուն դէմ, անդին Շահն ալ Արեւելքէն արշաւելով թուրքերու վրայ՝ Սուլթանին ոյժերը բաժնէ: Հանդիսաւոր յուշագիր մը կը գրուի Լէոփոլտին, հաւանաբար Պոլոնովիզիի եւ պատերազմի միւս կողմնակիցներու ստիպումով, որով՝ Ապետիքի Պարսկաստանի առաքելութիւնը կը պահանջուի. միեւնոյն ժամանակ կը գրուի նաեւ Արքունի Գանձարանին, որպէսզի անմիջապէս տրամադրէ «Ուղեծախսը» եւ դեսպանութիւնը իսկոյն կարենայ մեկնիլ: Նոյն օրն իսկ կը պատրաստեն նաեւ Լեհ թագաւորին հաւատարիմ՝ Ռոզտրադեւսի բերդակալին պատասխանը, որով կը հաղորդեն իրեն՝ թէ Ապետիք հրահանգ ստացած է մեկնելու, ու կը խնդրեն իրմէ ներկայացնել Լեհ թագաւորին՝ որ հոն միասին որոշեն ծախքերը՝ որոնց պէտք ունի դեսպանը իր ճամբորդութեան ժամանակ: Անհոգ Վիեննացիները, որոնց վիշաւոր մտածութիւնը՝ այս անհաշիւ դրամ սպառող պատերազմներու ժամանակ՝ արքունի Գանձարանին պարապու-թիւնն էր, միայն Լեհ թագաւորին ստիպումին վրայ կ'որոշեն դեսպանին առաքումը:

Բայց չկարծենք թէ վիեննական այս եռանդնաւորումին՝ անմիջապէս գործն ալ յաջորդէր: Դեռ մէկ ու կէս ամիս վերջն ալ, Նոյեմբեր 29-ին, Վիեննայի Ռազմական խորհուրդը կը զբաղի նորանոր նամակներ գրելով Արքունի Գանձարանին, որոնցմով կը պնդէ որ վերջապէս հաճին հարկաւոր գումարը տրամադրել Պետրոս Ապետիքին՝ Պարսկաստան մեկնելու համար, ու անմիջապէս պատասխանեն թէ ի՞նչ ըրած են այս հարցին նկատմամբ: Այս ստիպումին վրայ՝ որուն համար պէտք է ենթադրենք դարձեալ ազդեցիկ անձերու միջամտութիւնը՝ վերջապէս

Գանձարանն ալ կը շարժի ու անմիջապէս կը պատասխանէ: Պատասխանին մէջ վրձնական դիրք կը բռնէ Ապետիքի դեսպանութեան դէմ: . . .

Գանձարանի պաշտօնեաներու խորհուրդը երկու օր վերջ կը վճռէ Ապետիքի հարցին շուրջ: Դեկտեմբեր 1-ի գրութեան մէջ՝ յարգալից բայց վճռական կերպով կը յայտնէ Բարձրագոյն Ռազմական խորհուրդին, թէ իրենք չեն հաստատեր ու հարկաւոր ալ չեն տեսներ այս Պարսկական դեսպանութիւնը, որուն նպատակը թէեւ կրնայ օգտակար ու թերեւս կարեւոր ալ ըլլալ, սակայն այս նպատակին համար դժբախտաբար կարելի չէ գտնել նիւթական միջոցները: Պետութեան դրամական հարցը կարգադրողները այս հարցին մէջ ալ նոյն իրապաշտ ու սանձիչ դերը կը խաղան, զոր արդէն ասկից առաջ ալ շատ անգամ խաղացած էին՝ շատ մը մեծապէս խոստումնալից դրոճեր ջլատելով:

Յարգելի է Գանձարանին բռնած դիրքը, որ կ'ուղէր պետութեան դրամը խնայել. սակայն Արքունի Ռազմական խորհուրդի պատերազմի կողմնակիցները տեղիք չէին տար: Կ'երեւի թէ անոնք արդէն ծանօթ էին Գանձարանին բռնելիք դիրքին՝ անշուշտ առիթ ունեցած պիտի ըլլան անոնց դադափարները իմանալու՝ խօսակցութիւններու ժամանակ: Իրողութիւն է՝ թէ արքունի զօրավարներն ու զինուորական մարդիկ այլեւս թոյլ չեն տար գործը քաջաշելու: Նոյն օրն իսկ երբ Գանձարանին պատասխանը կը հասնի՝ Ռազմական խորհուրդի մարդիկ կը հաւաքուին: Արդէն պատրաստ էին այս պատասխանին: Դիտէին իրենց ընկիւղը, եւ գիտէին թէ բարձր շրջանակի մարդիկն ալ իրենց կողմն են. եւ ասոր ապացոյց՝ որ նոյն օրն իսկ, Դեկտեմբեր 1-ին, Ռազմական Բարձրագոյն խորհուրդէն հրահանգ կը տրուի թէ Ապետիք պէտք է Պարսկաստան մեկնի. . . (*) :

Դեռ արեւը չմտած՝ Ռազմական Բար-

ձրագոյն խորհուրդի հսկայ սեղաններուն վրայ գրադիրները կը պատրաստեն այն թուղթերն ալ՝ որ Պետրոս Ապետիքի դեսպանութեան վերաբերեալ կարեւոր կարգադրութիւնները կը պարունակեն:

«Instruction für den Petro Abedik, was Er dem König in Persien wegen d(er) ruptur mit denen Türckhen zu exponiren un dzu persuadiren habe».

Ուրեմն Պետրոս Ապետիք կ'ընդունի կայսերական ու արքունի կարեւոր բոլոր կարգադրութիւնները, որոնցմով Շահին պէտք էր ներկայանալ. մանաւանդ թէ որոշ կը նշանակուի թէ ի՞նչ բանի մասին պէտք է համոզէ Շահը: Դժբախտաբար Վիեննայի դիւանը շատ համառօտ ծանօթագրութեան մը մէջ ամփոփած է այս դէպքերուն յիշատակը. այս հրահանգին ամենակարեւոր վաւերացումն իսկ, ու այս խնդրին վերաբերեալ բազմաթիւ գրութիւնները ջնջուած են:

Հետեւաբար Գանձարանի խնայողապէս աշխուժեցումները ուրիշ ընկիւղ չունէին՝ եթէ ոչ զլուսինն ծոնել եւ հպատակիլ իրենցմէ աւելի զօրաւոր ու հեռատեսներու կամքին առջեւ: Ուստի չթուեցին խաժած՝ ստիպուեցան գրով յայտնել թէ կը հպատակին պետութեան բարձրագոյն շահերուն, եւ թէ Հունդարիոյ վերջնական ազատագրումին համար իսկապէս հարկաւոր է Ապետիքի դեսպանութիւնը դէպի Պարսկաստան:

Այնուհանդերձ Գանձարանի պաշտօնէութիւնը այնքան ալ աճապարանք չունէր՝ որքան Ռազմական խորհուրդի մարդիկը:

(*) HKR. Prot. exp. 1683. fol. 653. Dez. «Hof-Camer antwortet den 1. Decemb. 1683 auf des Hoffkriegs Rath intimation von 29. Nov. wegen abfertigung des Herren Bedic nach Persien». - «HofCamer. Umb. raichung der Raiss. undt Liefergeld (er) für den zur raiss in Persien fertig stehenden Pater Bedik, undt d(ass) dieses beschehen umb communication» - U. o. fol. 647.



Կուլ դան Ծնունդի, Ամանորի, Յայտնութեան տօները, կրօնապէս խստապահ ու ժամանակը քաջքել ուզող պաշտօնեաներ, ու չափնելու համար՝ դրամին պատրաստութիւնն ու յանձնումը: Միայն նոր տարուան փետր. 14-ին պատրաստ կ'ըլլայ վերջնականապէս «Abfertigung» (բաւարար կերպով) դրամը, արդէն իսկ հինգ շաբաթէ ի վեր Հոնգկոնգի Կոմս անուանումը Պետրոս Ապետիքի...:

Ուրեմն նա ճամբու պատրաստ է արդէն: Ոչ այնքան երիտասարդական կորովով, ինչպէս հեռաւոր Արեւելքի առաջին ճամբորդութեան շրջանին, բայց փորձառու դիւանագէտի կարեւոր գիտութեամբ հարստացած: Նկատած թէ այս անգամ Լեհ թագաւորն ալ հետաքրքրուած է Ապետիքի առաքելութեամբ, ճամբուն ուղեգիծը դարձեալ Լեհաստանէն ու Ռուսաստանէն կ'անցնի: Վարչաւիա (որ Խարքովի դուղընթաց միշտ աւելի կարեւոր կը դառնար), Հոմ ու Վիեննա՝ միշտ աւելի սերտ համագործակցութեան կը դիմեն: Լեհաստանի նուիրակ Փալաւիչին, Ս. Աթոռի քով՝ Չեպոյ ծիրանաւորը, Սոպիէսքի, իսկ Վիեննայի մէջ՝ Պոլոնիի, շարունակաբար ճեպընթաց սուրհանդակներով կը թղթակցին իրարու հետ: Հակաթրքական պատերազմի շարժիչ հոգին Վատիկանի մէջ է, ուսկից ամէն կողմ տարածուող դիւանագիտութիւնը կրցած էր վերջապէս միացնել ու մէկ նպատակի լծել Միջին Եւրոպայի պետութիւնները: Կոմս Պետրոս Ապետիքն ալ կրնար օրէ օր խորհրդակցել իտալացի նուիրակներուն հետ, լեհ դիւանագէտներուն հետ, եւ շատ հաւանաբար ստէպ մտած ելած ըլլալու է նաեւ արքունիքը Սոպիէսքիի՝ որ, ինչպէս

տեսանք, այս հակաթրքական դործին գլխաւոր մղիչներէն մէկն էր: Ապետիք արդէն քանի մը անգամ եղած էր Լեհաստան, այսպէս՝ Չենսթոխովա, Վարչաւիա, Խարքով, որոնց մասին հաստատ տուեալներ ունինք: Հետեւաբար երբ 1684-ի ձմրան վերջերը՝ Լեհաստանէն անցնելով Պարսկաստան երթալու ճամբորդութեան վերջին պատրաստութիւնները կը տեսնէր, իր լաւ ծանօթներու ձեռքով դիւրաւ կրնար գտնել՝ Վիեննայէն ընդունած դրամով՝ հարկ եղած դիւանագէտները, զէնքերն ու զանազան արեւելեան դրամները, զոր դուրուն համաձայն բաւական զարգացած վաճառականութեան շնորհիւ կրնար գտնել: Կրնար այժմ ընտրել իր ճամբու ընկերները, նկատի ունենալով ճամբորդութեան դժուար պարտականքը: Նա պէտք ունէր խելացի, լեզուագէտ ու միաժամանակ տոկուն առողջութեամբ օժտուած մարդոց, որոնք հարկ եղած պարագային՝ զէնքն ալ կարենային լաւ գործածել: Կարժէ հոս յիշել թէ Ապետիքի ճամբորդութենէն արդէն դար մը առաջ ալ շատ բընական պահանջ մը դարձած էր Եւրոպացի դեսպաններուն համար՝ հաւաքել իրենց ուղեւորութեան նկատմամբ ճամբորդական նկարագրութիւններ Վիեննայի, Փրալայի եւ Լեհաստանի դրամաճառանոցներէն:

Եւ ահա, լոյսը կը սկսի նսեմանալ: Ապետիքի կեանքը դարձեալ կը սուղուի Ժ. Զ. դարու վերջաւորութեան՝ Լեհ-ռուսական ճիւղապատ անձայր դաշտագետիներու կապտաթոյր մշուշին մէջ...:

Հունգարերէնէ քարգմանեց

Հ. ԱՆԴՐԷԱՍ ՖՈԿՈԼԵԱՆ

(Շարունակելի)

ՆՈՐԱԿԵՐՏ ՀԱՅ ԼՈՒՍԻՆԵԱՆՆԵՐ

(Շար. Բազմ. 1955. Թիւ 8-10, էջ 177)

ՄԱՍՆ Գ.

ԳԱԼՖԱՅԵԱՆ ԼՈՒՍԻՆԵԱՆՆԵՐ

1. — Ս. Ղազարու դիւանին մէջ ունինք երկու փոքր տետրակներ, ուր հաւաքուած են լրագիրներէ, Հ. Յակ. Իսապետեանցի կողմէ, քանի մը նորելուկ Լուսինեաններու մասին — մեր ցարդ տեսածներէն զատ — վիճաբանութիւններ՝ գաղղիէն լեզուով, որոնց մէջ կեդրոնացած են անոնց ծագման կամ վաւերականութեան տարբերը, եւ զորս պիտի օգտագործենք նաեւ մենք:

Զմիւռնիոյ մէջ կը բնակէր՝ կէս դարէ ի վեր՝ Գաղղիացի ընտանիք մը նոյն այն մականունով, որու նկատմամբ «Աթամպուլ»-ի մէջ (1878, Օգոստ. 26) տեղեկութիւն կը տրուէր, յիշելով Պետրոս՝ շառաւիղ Կիպրոսի Լուսինեաններուն, եւ հայր՝ հինգ զաւակներու, որոնցմէ մէկը կը տեղեկագրէր նոյն լրագրին, բողոքելով իր մէկ հօրեղբոր՝ Անտոն Ռուի դէմ, որ իրենց մականունը շորթած էր, եւ որուն որդեգրութիւնն ալ կը հերքէր՝ ինքզինքն յայտարարելով «միակ երեւցուցիչ» նոյն տոհմին:

Ուրիշ տեղեկագրութիւն մը, «Ժուռնալ տը Ժընեւ»-ի (1878, Սեպտ. 1) մէջ, կը վկայէր՝ թէ Գաղղիոյ կառավարութիւնը 1735ին քննութիւն մը կատարած էր, ու հաստատած յիշեալ Պետրոսի տոհմին ծագումը Կիպրոսի Լուսինեաններէն:

Զեմ մտնէր անոր մանրամասնութեանց մէջ, քանի որ հայ Լուսինեաններու հետ անուղղակի կապ մը ունին լոկ, եւ մեզ չեն հետաքրքրեր:

2. — Լուսինեաններ իտալիոյ մէջ, Լուսինեաններ Զմիւռնիոյ մէջ, փափաք

արթնցողին Գալֆայեան եղբայրներու սրտին մէջ՝ Լուսինեան ընտանիք մըն ալ կերտելու Կոստանդնուպոլսոյ մէջ: Անոնցմէ երկուքը, Ամբրոսիոս ու Խորէն, նախկին Միթիթաբեաններ, մէկը կարգաթող, միւսը՝ նկրտող եկեղեցական բարձր աստիճաններու, ուղեցին զարդարուիլ նաեւ այդ թագաւորական հին մականունով: Եւ ահա օր մը Ներսէս Վարժապետեան Պատրիարքը վճռեց իր հետեւալ գեկոյցը.

Պէշիկթաշ, 13 Հոկտ. 1879

Ամենապատիւ Պարք. Սրբազան Հայր Նախագահ Ազգ. Կեդր. Վարչութեան Պատն Ժողովոյ

Բարձրապատիւ իշխան Լուի, որ տոհմային վաւերագիրներու դորութեամբ ընդունուած է ի կայսերական կառավարութենէ անտի Ռուսիոյ (ուր կը բնակի ի 1829-է հետէ), իբրեւ սերունդ յուղիղ զծէ Լուսինեան թագաւորացի Կիպրոսի, Երուսաղէմի եւ Հայաստանի, պատիւ ունեցաւ իւր պաշտօնագրովն որ ի 19 Հոկտ. 1878, Ամենապատիւ Բարձրաշնորհ Սրբաղնութեան Չերում յայտարարել՝ թէ ես եւ եղբարքն իմ սերեալ եմք ի հօրեղբորէ նորա յԱմօրի-Յովսէփ Նար պէյ իշխանէն Լուսինեան, եւ թէ հետեւաբար ինքն կը համարուի մեծ հօրեղբայր մեր:

Նորուն Արքայական Բարձրութիւնը՝ իբրեւ արդի գլուխ մեր ազգատոհմին, կը պահանջէ՝ որ եւ ես ստանձնեմ իմ գերդաստանին բնիկ եւ պատմական Լուսինեան անունը, զոր ինքը եւ եղբարքս կը կրեն: Արդ, ըստ որում միեւնոյն ազգատոհմին անդամոց կարելի չէ այլ եւ այլ մականուն զործածել, եւ ըստ որում իմ